

**ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԸՍՏ
ԽՈՍՈՂՆԵՐԻ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ**

Հաշվի առնելով սփյուռքում հայերենի գործածության դանդաղընթաց կամ արագընթաց նվազման և վատագույն դեպքում՝ անհետացման գործընթացը՝ նպատակ ենք դրել պարզելու հայերենի գործածության աստիճանը և հաճախականությունը հայկական ամենամեծ գաղթօջախներից մեկում՝ ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգ գաղթած հայության շրջանում: Ուսումնասիրության աշխարհագրական սահմանները ներառել են Գլենդեյլ, Բրոքանկ, Մոնտեբելլո, Հոլիվուդ, Հյուսիսային Հոլիվուդ, Լոս Անջելես և մի քանի այլ քաղաքներ: Ուսումնասիրության հիմնական մեթոդը սոցիոլոգիական հարցման եղանակն էր, ինչի նպատակով կազմել ենք հարցաթերթիկ, որը նախատեսվում էր որքան հնարավոր է լայնածավալ տարածել հայկական միջավայրում՝ վիճակագրական առավել ճիշտ պատկեր ունենալու ակնկալիքով:

Լրացված հարցաթերթիկների վիճակագրության վերլուծության ամփոփումից հետո ստացանք հետևյալ պատկերը:

Հարցման ենթարկված ազգությամբ հայ անձանց 63 տոկոսը ծնվել է Հայաստանում, 15 տոկոսը՝ Իրանում/Պարսկաստանում, 7 տոկոսը Լիբանանում, 5 տոկոսը Սիրիայում, 6 տոկոսը ԱՄՆ-ում, 4 տոկոսը այլ երկրներում՝ Արցախ, Վրաստան, Ադրբեջան, Իրաք, Քուվեյթ, Թուրքիա, Ուկրաինա:

Հայաստանում ծնվածները, բացի երկրից, մեծամասամբ նշել են իրենց ծննդավայրերը՝ Երևան, Արմավյան, Գյումրի, Գորիս, Բերդ, Էջմիածին, Արմավիրի մարզ, Ստեփանավան, Վարդենիս, Մարտունի և այլն: Արցախում ծնվածները նշել են Ճարտարը, Սիրիայում ծնվածների գերակշիռ մեծամասնությունը Հալեպից է, Իրանից գաղթածները նշում են Թեհրանը, Իսֆահանը, Ջուղան: Լիբանանից գաղթածների մեծամասնությունը ծնվել է Բեյրութում: Այլ երկրներից եկածները նշել են Թիֆլիսը (Վրաստան), Բաքուն (Ադրբեջան), Կիևը (Ուկրաինա) և այլն:

«Ծնողների ծննդավայրը» հարցակետում աշխարհագրական սահմանները մեծանում են: Հայաստանին, ԱՄՆ-ին, Արցախին, Սիրիային, Իրանին, Վրաստանին, Ուկրաինային, Ադրբեջանին, Իրաքին և Քուվեյթին ավելանում են Հունաստանը, Թուրքիան, Ռուսաստանը, Եգիպտոսը: Հարցաթերթիկը լրացնողների մոտ 28 տոկոսը նշել է ծնողների (հայր և մայր) ծննդյան 2 երկիր, 39.2


տոկոսի ծննդավայրն է Հայաստանը, 12, 4 տոկոսինը՝ Իրանը, 9,3 տոկոս՝ Սիրիան, 4,1 տոկոս՝ Լիբանանը, 3.1 տոկոս՝ Թուրքիան և այլն:

Մեր ուսումնասիրության նպատակն է պարզել, թե որքանով է պահպանվում հայերեն խոսքը ընտանիքներում՝ ելնելով անձի, ինչպես նաև նրա ծնողների և մեծ ծնողների ծննդավայրից:

Սոցիոլոգիական հարցման են ենթարկվել 192 անձինք, որոնք ապրում են Միացյալ Նահանգների Կալիֆոռնիա նահանգի հայաշատ քաղաքներում: Հարցաթերթիկները մարդկանց բաժանվել են (խանութներում, այգիներում, կենտրոններում, եկեղեցիներում, փողոցում, սրճարաններում, ժամանցի վայրերում և այլն)՝ նախապես պարզելով նրանց հայ լինելու հանգամանքը, նրանց բացատրելով հարցաթերթիկը լրացնելու նպատակը և կարևորությունը՝ հընթացս պարզաբանելով նաև լրացման ձևը: Մարդկանց մեծամասնությունը դա անում էր սիրով, ոմանք կասկածամտորեն էին մոտենում հարցին, ոմանք էլ ուղղակի հրաժարվում էին: Հարցաթերթիկի լրացման հարմարավետությունն ապահովելու համար կազմել ենք նաև դրա առցանց տարբերակը, քանի որ բազմաթիվ մարդկանց համար ավելի հարմարավետ էր լրացնել այդ տարբերակը՝ ժամանակը խնայելու իմաստով: Google Forms ծրագիրը հնարավորություն է տալիս կազմելու առցանց հարցաթերթիկներ, որոնք լիովին փոխարինում են թղթի նմուշին:

Հարցաթերթիկների հավաքագրումից հետո տվյալները անցկացվել են Excel ծրագրի մեջ, որը հնարավորություն է տալիս մշակել տվյալները և ստանալ պատկերային գրաֆիկներ և աղյուսակներ:

Նախ նշենք, որ բոլոր հարցվածների (անկախ ծննդավայրից) 70,4 տոկոսը ընտանիքում խոսում է հայերեն, մոտ 26 տոկոսը հայերենին խառնում է անգլերենը, 2,6 տոկոսը խոսում է միայն անգլերեն, և մնացած մասը նշել է այլ լեզուներ, մասնավորապես ռուսերեն (ի դեպ ռուսերեն խոսողները և նրանց ծնողները ծնվել են Խորհրդային Հայաստանում, երբ բավականին մեծ էր ռուսերենի ազդեցությունը և գործածության ծավալները):



Ստորև բերված աղյուսակում նշված են երկրները, որտեղ ծնվել են հարցմանը ենթարկված անձինք և նրանց ծնողները, մեծ ծնողները, ինչպես նաև քաղաքները, որոնք նշվել են մասնակիցների կողմից:

Հայաստան	ԱՄՆ	Արցախ	Միքիա	Իրան	Վրաստան	Լիբանան	Ուկրաինա
Աբովյան	Գլենդել	Ճարտար	Հալեյ	Թեհրան	Թիֆլիս	Բեյրութ	Կիև
Երևան	Բրոքլանկ	Տիգրանակերտ	Ճարապետյ	Իսֆահան			
Բերդ	Մոնտեբելլո		Քեսաբ	Ջուղա			
Գյումրի	Հոլիվուդ		Քամիշլի	Արաք			
Գորիս	Հյսս Հոլիվուդ			Քերմանշահ			
Էջմիածին	Լոս Անջելես			Խոյ			
Արմավիրի				Սուլթանաբադ			
Ստեփանավան							
Վարդենիս							
Մարտունի							
Ծաղկաձոր							
Հրազդան							
Թալինի Գետափ							
Կարբի							
Շնող							
Վայք							
Նոյեմբերյան							

Աղբյուր	Իրաք	Քուվեյթ	Հունաստան	Թուրքիա	Ռուսաստան	Եգիպտոս	Իսրայել	Հնդկաստան
Բաքու			Սալոնիկի	Այնթապ	Դոնի Ռոստով		Երուսաղեմ	
				Սեբաստիա				
				Սեւերել				
				Պիթլիս				
				Պոլիս				
				Ատանա				
				Մարաշ				
				Վան				
				Էրզրում				
				Արաբկիր				
				Ուրֆա				
				Կարս				
				Օրդու				
				Կեսարիա				

1. Տվյալներն ըստ անձի ծննդավայրի

Եվ այսպես, այժմ պարզենք, թե որքանով է խոսվում հայերենը ընտանիքում՝ հաշվի առնելով անձի ծննդյան վայրը:

Հաշվի առնելով վիճակագրական տվյալների թվային մեծությունը ըստ անձանց ծնված երկրների՝ նպատակահարմար համարեցինք առանձնացնել ծնված վայրերի 5 երկրներ՝ Հայաստան, Իրան, Լիբանան, Սիրիա և ԱՄՆ:

լեզու % երկիր	հայերեն	անգլերեն	խառը
Հայաստան	73.6	3.6	20
Իրան	73.1	0	26.9
Լիբանան	75	0	25
Սիրիա	100	0	0
ԱՄՆ	82	9	9

Աղյուսակից երևում է, որ ընտանիքում 100 տոկոս **հայերեն** են խոսում Սիրիայի հայ ներկայացուցիչները: Սրան հաջորդում է ԱՄՆ-ն՝ 82 տոկոս, Լիբանանը՝ 75 տոկոս, Հայաստանը՝ 73.6 , Իրանը՝ 73.1 տոկոս և այլ երկրներ՝ Վրաստան, Ադրբեջան, Արցախ, Ռուսաստան, Լեհաստան, Ուկրաինա, Քուվեյթ, Իրաք, Թուրքիա:

Հարցվածների ամենամեծ տոկոսը, որն ընտանիքում խոսում է **անգլերեն**, ԱՄՆ-ում ծնվածներինն է (9 %), միջին դիրք է գրավում Հայաստանը (3.6 %) և ամենից փոքր տոկոսն արձանագրվել է Իրան, Լիբանան, Սիրիա երկրներում ծնված անձանց համար:

Այն ընտանիքներում, որտեղ խոսվում է թե՛ անգլերեն և թե՛ հայերեն, ունենք հետևյալ պատկերը. 26.9 տոկոս է կազմում Իրանում ծնվածների քանակը, որը խոսում է **խառը**՝ հայերենի և անգլերենի գործածմամբ: Նույն դասի ցուցանիշը նվազ տվյալներով ներկայացնում է Լիբանանը (25 %), որից հետո նվազման կարգով գալիս է Հայաստանը (20%) և ապա՝ ԱՄՆ-ն (9%):

2. Տվյալներն ըստ անձի ծնողների ծննդավայրի

Այժմ պարզենք, թե որքանով է խոսվում հայերենը ընտանիքում՝ հաշվի առնելով անձի ծնողների ծննդյան վայրը: Ինչպես նշել էինք վերևում, ըստ մեր հավաքագրած տվյալների անձի ծնողները առավելապես ծնվել են Հայաստանում (39.2%), Իրանում (12.4 %), Սիրիայում (9.3%), Լիբանանում (4.1%), Թուրքիայում

(3.1%), այլ երկրներ (Արցախ, Հունաստան, Վրաստան, Իրաք, միասին՝ 4%), 27.8 % կազմում են 2 երկիր (հոր և մոր) նշած անձանց տվյալները: Մեր ունեցած շտեմարանի՝ հայերենի գործածության տոկոսային տվյալներն ըստ լրացնող անձի ծնողների ծննդավայրի ունեն հետևյալ պատկերը.

լեզու % երկիր	հայերեն	անգլերեն	խառը
Հայաստան	68	4	23
Իրան	64	0	33
Լիբանան	33		67
Միքիա	100	0	0
ԱՄՆ (ծնվածներ չկան)			


3. Տվյալներն ըստ անձի մեծ ծնողների (տատիկ պապիկների) ծննդավայրի

Ընտանիքի տատիկ պապիկների ծննդյան աշխարհագրությունը ավելի ծավալուն է դառնում այս պարագայում: Հարցման ենթարկված անձանց մեծ ծնողները (57 %) ծնվել են Հայաստանից դուրս, ընդ որում ամենամեծ տոկոսը կազմում է Թուրքիայում ծնվածներին՝ 37%:

Հայաստան	43%
Այլ երկրներ	57%

Հարցաթերթիկի այն հարցին, թե արդյոք տատիկ-պապիկները խոսում են հայերեն, բացարձակ մեծամասնությունը պատասխանել է *այո*: Մեր հարցման ընթացքում հանդիպել ենք միակ դեպքին, երբ տատիկը չէր խոսում հայերեն, այլ խոսում էր թուրքերեն: Մի քանի դեպք էլ գրանցվել է այն մասին, որ անձինք խոսում են հայերեն, սակայն գրել և կարդալ չգիտեն: Քանի որ այս երևույթը համատարած բնույթ չէր կրում, ուստի վիճակագրական որակ չէր ներկայացնում, և այս մասին ասվում է մասնավորապես:

4.2 Տատիկ պապիկները խոսո՞ւմ են հայերեն:



Այս պատկերում *ոչ* պատասխան է հավաքել 11.5 տոկոսը, սակայն հարցաթերթիկների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նրանք կամ կենդանի չեն, կամ չեն ապրում տվյալ ընտանիքի ներսում:

Ստորև բերված աղյուսակում նշված է մեծ ծնողների ծննդյան երկրների տոկոսային հարաբերությունը ըստ Հայաստանից դուրս ծնվածների.

Իրան	29%
Լիբանան	7%
Սիրիա	10%
Թուրքիա	37%
Վրաստան	6%
Ադրբեջան	4%
Արցախ	2%
Այլ (Հունաստան, Հնդկաստան, Իսրայել, Ռուսաստան Իրաք, Բուլղարիա)	6%

Այժմ պարզենք, թե որքանով է (տոկոսային հարաբերությամբ) խոսվում հայերենը ընտանիքում՝ հաշվի առնելով անձի ծնողների ծնողների ծննդյան վայրը:

լեզու % երկիր	հայերեն	անգլերեն	խառը
Հայաստան	69	4	25
Իրան	66	0	34
Լիբանան	60	0	40
Միքիա	100	0	0
ԱՄՆ (ծնվածներ չկան)			

Այսպիսով, վիճակագրական տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ գերակշիռ մեծամասնությամբ ընտանիքում խոսում են հայերեն (70%-ից բարձր): Անգլերեն օգտագործողների քանակը նվազագույնն է (2%-ի սահմաններում): Ընտանիքում 25-26 տոկոս դեպքերում հայերենին խառնում են նաև անգլերենը:

Григорян Гаяне – Использование армянского языка в штате Калифорния в зависимости от места рождения говорящих. - Учитывая снижение использования армянского языка в диаспоре, мы стремились определить уровень и частоту использования армянского языка в одной из крупнейших колоний армян, иммигрировавших в штат Калифорния, США. Из анализа статистических данных становится ясно, что большая часть семьи говорит по-армянски (более 70%). Количество англоязычных пользователей самое низкое (около 2%). В 25-26% случаев в семье говорящие смешивает английский язык с армянским.

Grigoryan Gayane – The use of Armenian language in the state of California according to the speakers' place of birth. – Taking into the consideration the decline in the use of the Armenian language in the Diaspora, we have set a goal to determine the level and frequency of use of the Armenian language in one of the largest colonies of Armenians who have immigrated to California State, the US A. From the analysis of statistical data, it becomes clear that the majority families speak Armenian (more than 70%). The number of English users is the lowest (around 2%). In 25-26% of cases, the family mixes English with Armenian.